

**ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ  
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆՆԵՑ**

**Ռ. Ս. ՂԱԶԱՐՅԱՆ**

Միջին հայերենի, իբրև հայոց լեզվի զարգացման մի առանձին փուլի բառապաշարի տեսական ուսումնասիրության հիմքը դրվել է Ա. Այտընյանի «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» նշանավոր աշխատութեամբ:

Ուրվագծելով գրաբարի ընդերքում ձևավորված աշխարհաբարի նախնական և հետագա զարգացման ընթացքը՝ Այտընյանը 7-րդ դարը համարում է գրաբարի և աշխարհաբարի, իբրև միմյանցից տարրորոշվող լեզուների սահմանաբաժանման շրջան՝ գտնելով, որ արդեն 11-րդ դարում գրաբարը մեռած լեզու էր, որի կողքին ձևավորվել էր մի նոր լեզու՝ «Նախնեաց կամ ստորին դարուց ռամկօրէն անուամբ»<sup>1</sup>: «Նախնայաց ռամկորենը» կամ միջին հայերենը, որ պարզորոշ կերպով առանձնացվում է որպես լեզվի զարգացման մի առանձին փուլ՝ ընդգրկելով 11—15-րդ դարերը, դեռևս 9-րդ դարի կեսից առաջ օրինաչափորեն կրել էր տարբեր կարգի փոփոխություններ, որոնք իրենց արտահայտությունն էին գտել նաև բառապաշարի մեջ: Բառապաշարային այդ փոփոխությունները, ինչպես նշում է Այտընյանը, պայմանավորված էին՝

ա) նորանոր բառերի գործածութեամբ, ինչպես՝ համիմաղ «գատախազ», և անհամիմաղ, խոստակղար «որդիներ, զավակ, հաջորդներ», սեռ և բնասեռ կամ բնասար, խոռ, խուղ, նեպակ «հրամանագիր», շար «հարկ, տուրք», բեկար «բաժ, տուրք», մատակ «ջուր հանելու տեղ», սեւերես, շնորհաւոր, արեշատութիւն «երկար կյանք» և այլն (էջ 143): Միաժամանակ գտնում է, «կարևոր են նաև նոր նշանակութիւնները», ինչպես՝ վաղն «վաղը», հայրենիք «կալվածք», հայրենատէր «կալվածատեր», ինչ «մինչև», ուղեկիցք, ջրբափ «ջրվեժ», ձնոնաւոր «արհեստավոր» և այլն<sup>2</sup> (էջ 143):

բ) նոր բառաձևերով՝ պայմանավորված հատկապես «սղմանց և ամփոփմանց հետզհետէ յաճախութեամբը» (էջ 152): Այդ բառերից են՝ ջաղաց (ջրաղաց), էգի (այգի), կարմունջ (կամուրջ), հեռացնել (հեռացուցանել), ապսուարել (ապսպարել), մին (մի) (էջ 143), այնուհետև՝ էգուց (այգուց), լեռդ (լեարդ), զերդ (զիարդ), մէկ (միակ), մեճակ (միայնակ), կոբեկ, խարծիլ, աննուխ, դուր, ուժ, շուտ, ամպակ (անապակ), ջալամ.— վաքել, ժողվել, տապկել, օձնել, մտնել, կամ օծել, մտել. թառմիլ, պառկիլ, ընկնիլ, խաղիլ և այլն (էջ 152):

գ) նորամուտ օտար բառերի կիրառութեամբ՝ «իրենց յաճախութեամբն

<sup>1</sup> Ա. Այտընյան, Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի, Վիեննա, 1866, էջ 156:

<sup>2</sup> Այսուհետև շարադրանքում՝ միայն էջահամարը:

ու նոր ուղղագրութեամբը» (էջ 145), ինչպես՝ կուղպակ «կրպակ», հարամ, հալալ, ապիզար, փեղամբար, նալաթ և այլն (էջ 145):

Զնայած Այսրենյանը նպատակ չի ունեցել թափանցելու միջին գրական լեզվի բառապաշարի ուսումնասիրության խորքերը և ներկայացրել է «նախնայաց ոամկորենի» միայն ընդհանուր ուրվագիծը, սակայն նրա մի շարք դրույթներն ու տեսական եզրակացությունները երկար ժամանակ ուղենիշ են ծառայել հետագա ուսումնասիրողների համար:

Այստեղ միաժամանակ չպետք է անտեսել այն փաստը, որ Այսրենյանի աշխատության լույս ընծայումից դեռևս երեք տասնամյակ առաջ Նոր հայկազյան բառարանը ներառել էր միջինհայերենյան բազմաթիվ բառեր՝ հեղինակային վկայություններով հանդերձ, որոնցից շատերը բնորոշվում են ոմկ. (ոամկորեն) նշումով:

Այսրենյանից հետո միջին հայերենի ուսումնասիրությունը մի նոր աստիճանի հասցրեց Ղ. Հովնանյանը, որն իր «Հետազոտութիւնք նախնեաց ոամկորէնի վրայ» աշխատության մեջ փաստական նյութերի համադրմամբ միաժամանակ վեր է հանում ժամանակին գիտությունը հայտնի 12—17-րդ դարերի գրեթե ողջ «ոամկական» մատենագրության լեզվաճական բնույթի մի շարք առանձնահատկություններ: Հեղինակը, սկսելով Ներսես Շնորհալու հանելուկներից մինչև նորագույն բժշկարանները, միջնադարյան հայ ինքնուրույն և թարգմանական գրականության տարբեր երկերի ընձեռած հարուստ փաստերի հիման վրա բանասիրական մանրակրկիտ քննության է ենթարկում «նախնայաց ոամկորենի» բառապաշարի հետ առնչվող բազմաբնույթ հարցեր՝ իր ամբողջ խորությամբ երևան հանելով միջնադարյան միջին գրական լեզվի ինքնուրույնությունը:

Հետաքրքիր է, որ միջնադարյան գրավոր հուշարձանների բազմակողմանի քննությունը հեղինակին բերում է այն եզրակացության, որ «Նախնեաց ոամկորէնն ծագած է Հայաստանի ժամանակակից գաւառակաւոններէն, եւ զանազան նղանակաւորմամբ՝ հին գրաւոր լեզուէն կամ թէ խառնուրդ է ժամանակակից գաւառական բարբառոց եւ գրաւոր լեզուի»<sup>3</sup>:

Խոսելով «նախնայաց ոամկորենի» ծագման մասին՝ հեղինակն անցնում է լեզվական տարրերի ներթափա. ցումների քննությանը՝ զանազանելով ոամկախառն զբարբար և զբարբարախառն ոամկորեն, ըստ որում մատենագրական հուշարձանների մեջ սկզբնապես մուտք էին գործում ժողովրդախոսակցական լեզվի, իսկ հետագայում՝ գրաբարի տարրերը: «Ռամկորէն գրութեանց՝ մանաւանդ ի սկզբան անդ՝ աւելի կամ ւրակաս գրաբարով խառն ըլլալը բնական էր, քանի որ Ուռհայեցոյն պէս գրաբար գրողներ օրինակ կային ոամկագիր հեղինակաց առջև: Անոնք հնոյն մէջ մուծած էին ի նորոյն, ասոնք նորոյն մէջ սկսան մուծանել ի հնոյն. նախորդաց ոամկախառն գրաբարին դիմաց՝ յաջորդք հնարեցին զբարբարախառն ոամկորէն:— Բայց թէ եւ այս օրինակը շատուէր, դժուարաւ կարող էին ոամկախօս մատենագիրք յանկարծ միահաղոյն թողուլ զայն ամենայն՝ որ մինչեւ նոյն ժամանակ տեսած էին ի գիրս: Եւ «բոլորովին տարբեր եղանակաւ գրել, գրել ճիշդ այնպէս՝ ինչպէս կը խօսէին» (էջ 21):

Աշխատության մեջ ամփոփված փաստական առատ նյութը՝ բազմապիսի շահեկան ծանոթագրություններով հանդերձ, հեղինակի միանգամայն ճիշտ գիտողություններն ու եզրահանգումները որոշակի դեր են խաղացել միջին հայերենի ուսումնասիրության բնագավառում:

<sup>3</sup> Ղ. Հովնանյան, Հետազոտութիւնք նախնեաց ոամկորէնի վրայ, Վիեննա, 1897, էջ 10: Այսուհետև շարադրանքում՝ էջախառնարք:

Միջին հայերենին նվիրված հաջորդ ուսումնասիրությունը Յոզեֆ Կարստի «Historische Grammatik des künkisch-Armenischen» (Strassburg, 1901) հայտնի աշխատությունն է: Թեպետ այդ աշխատության հիմնական մասերում գլխավորապես քննվում են կիլիկյան հայերենի հնչյունաբանության ու ձևաբանության հետ կապված երևույթները՝ իրենց պատմական վարպացման մեջ, ինչպես և հավելվածում ընդհանուր գծերով շարահյուսական առանձնահատկությունները, բայց հեղինակի ներկայացրած մեծածավալ նյութը և բերած փաստարկները կողմնակի կերպով նպաստում են միջին հայերենի ամբողջական բառապաշարի ուսումնասիրության գործին:

Իր մի շարք աշխատություններում միջին հայերենի մասին տարբեր առիթներով խոսել է նաև Մ. Աբեղյանը: Մեզ հետաքրքրող այդ աշխատություններից հատկապես պետք է նշենք միջին հայերենի բառապաշարի ուսումնասիրության համար կարևոր սկզբնաղբյուր հանդիսացող «Գուսանական ժողովրդական տաղեր» ժողովածուն, որի ներածական մասում, որդեգրելով հիմնականում Յ. Կարստի տեսակետները, Աբեղյանը գրականագիտական հարցերին զուգընթաց տալիս է հայ հին գուսանական երգերի՝ հայերենների լեզվի ընդհանուր բնութագիրը՝ գրելով. «Մեր այս հին տաղերը, լինելով աշխարհականների բանաստեղծություն, հորինված են ոչ թե հին եկեղեցական հայերենով, գրաբար լեզվով, այլ ժամանակի կենդանի խոսակցական լեզվով, որ 12-րդ դարուց սկսած դարձել է գրական լեզու: Դա միջին հայերենն է, որ մի անցման լեզու է հին հայերենից դեպի նոր հայերենը և թեպետ գրաբարին դեռ ավելի մոտ է, քան աշխարհաբարը, բայց նրանցից մեծ շափերով տարբեր է»: Գուսանական ժողովրդական տաղերի տարբերակները «... նկատի ունենալով՝ տեսնում ենք,— շարունակում է Աբեղյանը,— որ հին լեզվական ձևերին, հնացած բառերին ու բառաձևերին, բառերի հին շարադասական ձևերին փոխանակել են նորերը: Հաճախ բուն հայերեն բառերի տեղ անցել են օտար բառեր. մի բարբառային ձև կամ բառ փոխված է մի ուրիշ բարբառային ձևի կամ բառի: Այսպես՝ նույն բառերը գործածված գտնում ենք տարբեր ձևերով՝ օնքեր, ունքեր, ուներ, յուներ. այլ, ալ. ան, էն. կայր, կար, կեր. ոտից, ոտվնու. անկաւ, ինկաւ, ընկաւ. տեսանել, տեսնել, տեսնուլ. ելանել, ելնել, ելնուլ. շեմ ի սիրել, շեմ սիրել, շեմ սիրեր և այլն»: Եվ վերջապես, Աբեղյանը հանգում է այն եզրակացություն, որ «հայերենների մեջ իշխող լեզուն միջին հայերենն է, որ պատկանում է մեր արևմտյան բարբառներին»<sup>4</sup>:

Միջին հայերենի պատմության տարբեր հարցերի քննությանն է անդրադարձել Հ. Աճառյանը «Հայոց լեզվի պատմություն» աշխատության երկրորդ մասում (Երևան, 1951), որտեղ ընդհանուր գծերով խոսում է մասնավորապես այդ լեզվի կազմավորման, նրա բարբառային հիմքի, 11-րդ դարից հետո գրական և ժողովրդական լեզուների միջև մեծ շափերի հասնող տարբերությունների, 11—12-րդ դարերում հայ բարբառների գոյության մասին, տալիս է կիլիկյան հայերենի հնչյունական համակարգի ու քերականության համառոտ նկարագիրը և, մանավանդ, առանձին վերնագրերի տակ բացահայտում է միջին դարերում մի շարք լեզուների ազդեցությունը հայերենի վրա՝ ներկայացնելով այդ լեզուներից կատարված արդեն իսկ «Հայերեն արմատական բառարանում» տեղ գտած փոխառությունները:

Հայ լեզվաբանության պատմության մեջ Յ. Կարստից հետո Ս. Ղազարյանն էր, որ ուսումնասիրության առանձին առարկա դարձրեց միջին հայերենը:

<sup>4</sup> Մ. Աբեղյան, Գուսանական ժողովրդական տաղեր, Երևան, 1940, էջ 19—20,

Ելնելով իր հետազոտությունների արդյունքներից՝ Ս. Ղազարյանը մտադիր էր ներկայացնելու միջին դրական լեզվի ողջ համակարգը, բայց, ցավոք, այդ մեծ ծրագիրը շհասցրեց իրականացնել ամբողջությամբ՝ հրապարակելով միայն ուսումնասիրության առաջին մասը (Միջին հայերեն, գիրք Ա, Երևան, 1960), որը հիմնականում նվիրված է միջին հայերենի հնչյունաբանության բազմակողմանի քննությանը:

Դեռևս իր «Հայոց լեզվի համառոտ պատմություն» (Երևան, 1954, 1981<sup>2</sup>) աշխատության մեջ, ուրվագծելով հայոց գրական լեզվի սկզբնավորման ու զարգացման ընթացքը, Ս. Ղազարյանը ընդհանուր գծերով նկարագրում է միջին հայերենի կազմավորումը, տալիս է միջնադարյան հայ մատենագրության՝ գեղարվեստական, պատմագրական և գիտական երկերի լեզվական տեսությունը, վեր է հանում հնչյունական համակարգի ու քերականական կառուցվածքի հիմնական առանձնահատկությունները, այնուհետև անցնում է բառապաշարի ու բառակազմության քննությանը և, վերջապես, ներկայացնում է միջին հայերենը որպես պետական լեզու և բնութագրում նրա հետագա վիճակը:

Տալով միջին հայերենի ամբողջական նկարագիրը՝ Ս. Ղազարյանը գրում է. «Այսպիսով, միջին հայերենը հայ ժողովրդի գրական համաժողովրդական լեզուն էր 10—17-րդ դարերում: Նա կազմավորվում էր հայ ժողովրդական խոսակցական լեզվի, այսինքն՝ այդ շրջանում ամբողջ հայ ժողովրդին հասկանալի և հայերենի բարբառներում կամ բարբառների մեծ մասում կիրառվող լեզվական ընդհանուր իրողությունների ու գրաբարի դյուրամբռնելի փաստերի հիման վրա: Միջին հայերենը գտնվում էր իր անընդհատ զարգացման, հին որակի հետ կապված տարրերի մահացման ու նոր որակի հետ կապված տարրերի տարածման ու ամրացման պրոցեսում: Հայոց գրավոր լեզվի զարգացման ոչ մի շրջանում այնքան ուժեղ կերպով չեն բախվել հին ու նոր որակի հետ կապված տարրերը, ինչպես միջին դարերում: Սակայն հնի և նորի այդ ուժեղ պայքարը իր վերջնական ավարտին չի հասնում, որովհետև հայ ժողովրդի պատմական կյանքում կատարված տեղաշարժերը այդ լեզվի նոր որակի հետ կապված տարրերի ծավալման ու ամրացման համար անհրաժեշտ պայմաններ չեն ստեղծում»<sup>3</sup>:

Իր աշխատություններում միանգամայն ճիշտ ներկայացնելով հայոց գրական լեզվի զարգացման պատմական ընթացքը՝ Ս. Ղազարյանը, այնուամենայնիվ, «որոշ տուրք է տալիս ավանդույթին»<sup>4</sup>: Ինչպես կարելի է նկատել, Ս. Ղազարյանը հայոց լեզվի պատմության շրջանաբաժանման մեջ 10-րդ դարն է ընդունում իբրև գրաբարի և միջին հայերենի սահմանագիծ, որը, ինչ խոսք, առարկության տեղիք է տալիս, քանի որ նման մոտեցմամբ «միջին հայերենի ժամանակագրական շրջանակները ընդարձակվում են»<sup>5</sup>:

Միջին հայերենին առնչվող տեսական բնույթի տարբեր հարցերի վերաբերյալ խորն ու բազմակողմանի դիտողություններով հանդես է եկել Գ. Զահուկյանը, որն իր մի շարք աշխատություններում, իստորեն տարբերակելով գրական լեզվի պատմությունը ընդհանրապես լեզվի պատմությունից, բազմաթիվ կնճռոտ հարցերի պարզաբանմանը զուգընթաց տվել է հայոց լեզվի պատմության շրջանաբաժանման հարցի ամենակատարյալ լուծումը:

Իր «Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը» աշխատության մեջ հայոց գրավոր լեզվի պատմության ամբողջ ժամանակաշրջանը բաժանելով

Ս. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 1981<sup>2</sup>, էջ 289—90:

<sup>6</sup> Գ. Զահուկյան, Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան, 1969, էջ 22:

<sup>7</sup> Ս. Ղազարյան, Աշխ., էջ 23:

կրթք շրջանի՝ հին, միջին և նոր, Գ. Զահուկյանը մեզ հեաաքրքրող մեջն ըլլանը համարում է 12—16-րդ դարերը, երբ հանդես է գալիս միջին հայերենը, այնուհետև այդ շրջանը իր հերթին բաժանում է կիլիկյան նորմավորման (12—14-րդ դարեր) և աշխարհաբարացման (15—16-րդ դարեր), ենթաշրջանների: Միջին շրջանը բաժանելով երկու ենթաշրջանի՝ Գ. Զահուկյանը բացառւում է հատկապես առաջին ենթաշրջանում դրսևորվող կիլիկյան միջին գրական հայերենի բնորոշ առանձնահատկութունները՝ հնչյունական, քերականական, բառակազմության ու բառապաշարի տեսակետից:

Միջին հայերենի՝ հատկապես նրա հնչյունաբանական համակարգի ուսումնասիրությանը նվիրված հաջորդ ամբողջական գործը «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» Ա հատորի մի մասը կազմող Հ. Մուրադյանի «Հնչյունաբանութուն» աշխատութունն է (էջ 55—165): Այդ հատորում ընդգրկված մասերից մեկը նույնպես Հ. Մուրադյանի գրչին պատկանող ծավալուն «Ներածութունն» է (էջ 9—54), որտեղ տարբեր վերնագրերի սակ արծարծվում են միջին հայերենի ուսումնասիրության հետ կապված մի շարք հարցեր, որոնց շուրջ կկառուցենք մեր խոսքը՝ շանդրադառնալով հեղինակի «Հնչյունաբանութուն» աշխատությանը:

«Ներածութունում» հարցի պատմության ակնարկով Հ. Մուրադյանը տալիս է միջին հայերենի ուսումնասիրության բնագավառում առավել աչքի ընկած հայասկետ-լեզվաբանների աշխատությունների հանգամանալից գնահատականը՝ ներկայացնելով այդ լեզվաբաններից շատերի տեսակետները միջին գրական լեզվին առնչվող տարբեր հարցերի վերաբերյալ:

«Ուսումնասիրության մեթոդը» վերնագրի տակ հեղինակը պարզաբանում է այն սկզբունքները, որոնք հիմք են ծառայում միջին հայերենի բնորոշ լեզվական առանձնահատկութունները տարբերակելու համար: Այնուհետև անցնում է այդ առանձնահատկութունների բնութագրմանը, ցույց է տալիս այն փոփոխությունները, որոնք արձանագրվում են միջին հայերենի հնչյունական, քերականական համակարգերում և բառապաշարում: Այսպես՝ բառապաշարի մեջ ի հայտ եկող որոշակի փոփոխությունների մասին Հ. Մուրադյանը ճիշտ կերպով գրում է. «Բառապաշարում արձանագրվում են բազմաթիվ հայերեն նորակազմութուններ, արմատական բառեր, որոնք վկայված շեն նախորդ շրջանից և գրական լեզվի մեջ են մտել բարբառներից, հին բառաձևերի նոր իմաստավորումներ, ինչպես նաև փոխառություններ արաբերեն, պարսկերեն, ֆրանսերեն, թուրքերեն և այլ լեզուներից»: Միաժամանակ ճիշտ ներկայացնելով հիշյալ լեզուներից կատարված փոխառությունների դրսևորումները՝ Հ. Մուրադյանը շարունակում է. «Արաբերեն ու պարսկերեն փոխառությունները ավելի ինտենսիվ են միջին հայերենի վաղ շրջանում և մասնավորապես բժշկագիտական աշխատություններում. բառապաշարային այդ շերտի մի մասը ավելի լայն տարածում ունի և արձանագրվում է համարյա բոլոր վայրերում. մյուս մասի տարածվածութունը ավելի սահմանափակ է և համեմատաբար ունի տեղային կամ մասնագիտական փոխառության բնույթ: Պարսկերենից կատարվող փոխառությունները շարունակվում են նաև հետագայում: Ֆրանսերեն փոխառությունների մի մասը հատուկ է միայն կիլիկյան հայերենին՝ որպես նրա վարչական-ավատական հարաբերությունները բնորոշող մի իրողութուն: Ֆրանսերեն բառերի մի շնչին մասը միայն գրական ճանապարհով տարածվել է ամբողջ միջին հայերենում (պարոն և այլն): Թուրքական փոխառությունները նախապես սակավաթիվ

\* Տե՛ս Գ. Զահուկյան, Ըզվ. աշխ., էջ 44—49:

են, Երեւանի աստիճանաբար դրանց թիվը ժամանակի հետ աճում է և արդեն 16—17-րդ դարերում հասնում է մեծ չափերի»<sup>9</sup>:

Հետագա շարադրանքում, զարգացնելով հատկապես Հ. Աճառյանի, Ս. Ղազարյանի և Գ. Զահուկյանի տեսակետները միջին հայերենի բանավոր-խոսակցական հիմքի, միջնադարում բարբառների մասնատվածության վերաբերյալ, Հ. Մուրադյանը, ուշադրությունը կենտրոնացնելով հիմնականում կիլիկյան հայերենի վրա, մասնավորապես նշում է, որ «կիլիկյան պետության մեջ նրա գրավոր լեզվի հիմքում դրվում է կիլիկիայի հայության ժամանակի խոսակցական լեզուն»<sup>10</sup>: Շարունակելով իր խոսքը՝ Հ. Մուրադյանը այնուհետև գրում է. «կիլիկիայի հայ պետականության անկումից հետո գրական լեզուն, ինչպես բուն երկրում, այնպես և նրանից դուրս, ավելի է ենթարկվում տեղական բարբառների ազդեցությանը: Եվ թերևս դրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ 14—15-րդ դարերից սկսած խիստ աշխուժանում են հայ բարբառները, որոշակիորեն սկսում են ընդգծվել վաղ աշխարհաբարի արևմտահայ և արևելահայ տարբերակների ուրվագծերը»<sup>11</sup>: «Ներածության» մեջ քննության է առնվում նաև միջին հայերենի ժամանակաշրջանի հարցը: Լեզվի պատմության ամեն մի շրջանաբաժանում համարելով պայմանական՝ Հ. Մուրադյանը նախ գտնում է, որ «միջին գրական հայերենի սկզբնավորությունը ավելի ճիշտ կլինի համարել 12-րդ դարը»<sup>12</sup>:

Ինչպես արդեն նշվել է, Գ. Զահուկյանը, հայոց լեզվի պատմության շրջանաբաժանման իր սկզբունքներից ելնելով, միջին հայերենի շրջանը, իր զարգացման երկու ենթաշրջանով, ընդունում է 12—16-րդ դարերը: Այս կապակցությամբ Հ. Մուրադյանը գրում է. «Սույն ուսումնասիրության (այսինքն՝ «Հնչյունաբանության» — Ռ. Ղ.) հիմքում ընկած են պրոֆ. Գ. Բ. Զահուկյանի միջին հայերենի պատմության շրջանաբաժանման սկզբունքները, միայն այն տարբերությամբ, որ այստեղ երկրորդ ենթաշրջանի վերջը համարվում է 17-րդ դարը, նկատի ունենալով, որ այս էտապի առանձնահատկությունները շարունակվում են ընդհուպ 17-րդ դարի վերջը»<sup>13</sup>:

Ի վերջո, «Ներածությունում» բերվում են հեղինակի կողմից դիտարկված միջին հայերենի սկզբնադրյունները և տրվում նրանց լեզվաբանական բարձրը:

Միջին հայերենի բառապաշարի ամբողջական ուսումնասիրության առաջին լուրջ փորձը Մ. Մուրադյանի «Բառագիտություն» խորագրով աշխատությունն է, որը նույնպես, ինչպես նախորդ աշխատությունը, տեղ է գտել «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» Ա հատորում: Բուն ուսումնասիրությունն ընդգրկում է հատորի 169—257 էջերը:

Աշխատության համառոտ առաջաբանում Մ. Մուրադյանը բնութագրում է միայն այն գործերը, որոնց հեղինակները հատկապես աչքի են ընկել միջին հայերենի բառապաշարի գործնական ուսումնասիրության բնագավառում՝ ոչ մի խոսք չսանելով նոր հայկազյան բառարանի մասին: Այդ հեղինակներն են՝ Ա. Այսրենյան, Ղ. Հովնանյան, Մ. Պոտուրյան, Ն. Բյուզանդացի, Յ. Կարսու: Հպանցիկ հիշատակվում են նաև Հ. Հյուբշմանը, Հ. Աճառյանը, Ստ. Մալխասյանցը և Բ. Զուգասզյանը:

Առաջաբանի վերջում Մ. Մուրադյանը գրում է. «Մեր խնդիրը միջին հայ-

<sup>9</sup> «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», Բ. Ա, Երևան, 1972, էջ 81:

<sup>10</sup> Նույն տեղում, էջ 36:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 37:

<sup>12</sup> Նույն տեղում, էջ 48:

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 44:

յերենի բառապաշարի ընդհանուր նկարագրությունն է, բառաշարների քննությունը, բառակազմական, իմաստաբանական բնորոշ իրողությունների վերլուծությունը, պատմական, հասարակական ու կրթական այն հանգամանքների պարզաբանումը, որոնք նպաստել են բառապաշարի մեջ կատարված փոփոխություններին»<sup>14</sup>:

Անցնելով ուսումնասիրության բուն նյութի քննությանը՝ Մ. Մուրադյանը նախապես միջին գրական լեզվի բառապաշարը բաժանում է երկու հիմնական շերտի, որոնց մեջ մտնում են գրաբարից և միջին հայերենով ավանդված բառերը: Գրաբարից ավանդված բառերը քննելիս հեղինակը նշում է, որ դրանք միջին գրական լեզուն ժառանգել է երկու ճանապարհով՝ բնական և արվեստական, այնուհետև համառոտակի խոսում է գրաբարի այն ազդեցության մասին, որը մե՛րթ ուժեղ, մե՛րթ թույլ դրսևորումներով ի հայտ է գալիս միջին հայերենի բառապաշարում, ապա բնագրային համապատասխան օրինակների վկայակոչությամբ պարզաբանում է իմաստափոխության հետ կապված որոշ հարցեր:

Միջին հայերենով ավանդված բառերի քննությանն անցնելիս հեղինակը դրանք նախ և առաջ դասդասում է երեք խմբերի մեջ, որոնք համապատասխանաբար ընդգրկում են բնիկ, ենթաշերտային և փոխառյալ բառերը: Հետաքրքրական է, որ հեղինակը, հիմնականում նկատի ունենալով Հ. Աճառյանի «Հայերեն արմատական բառարանի» արդյունքները, աշխատության մեջ բնիկ բառերը քննում է ստուգաբանական տեսանկյունից: Այդ բառերի մեծ մասը ծագումնաբանորեն կապելով հնդեվրոպական արմատների և բառերի հետ՝ միաժամանակ տալիս է մի քանի բառերի ինքնուրույն ստուգաբանություններ:

Առանձնացնելով բնիկ բառերից ենթաշերտային բառեր՝ հեղինակը, այս դեպքում ձայնդարձի և աճականի օրենքներով, կրկին անգամ անցնում է այդ կարգի բառերից մի քանիսի ստուգաբանությանը, իսկ հետո տարբեր աղբյուրներից քաղած ամբողջ ենթաշերտային բառամթերքը բաշխում է իմաստային զանազան խմբերի մեջ:

Հետագա շարադրանքում, նախքան տարբեր լեզուներից կատարված փոխառությունների քննությանն անցնելը, Մ. Մուրադյանը ընդհանուր գծերով պարզաբանում է այն հանգամանքները, որոնք նպաստել են միջին հայերենի մեջ օտար բառերի ներթափանցմանը:

Իր աշխատության մեջ, իբրև քննության առարկա, հեղինակը ներկայացրել է միջին հայերենով ավանդված արաբերեն, պարսկերեն, թուրքերեն, հունարեն, լատիներեն, իտալերեն և ֆրանսերեն բառերը՝ իրենց իմաստային տարբեր խմբերով: Հանգամանալից քննության են ենթարկվել հատկապես արաբական փոխառությունները, և ապա՝ անհրաժեշտ մանրամասնությամբ քննվել են պարսկերեն և թուրքական լեզուներից փոխառված բառերը, որոնց տարբերակումներն իսկ, ինչպես և աշխատության կից բերված համապատասխան բացատրություններով օտար բառերի ընդարձակ ցանկերը լուրջ և կարևոր ներդրում են միջին հայերենի բառապաշարի ուսումնասիրության բնագավառում:

Աշխատության երկրորդ՝ բառակազմության բաժնում Մ. Մուրադյանը փաստական նյութի հիման վրա համառոտ կերպով քննում է միջին գրական լեզվի նորակազմ բառերը, որոնք ըստ կազմության բաժանում է մի քանի խմբերի, առանձնացնում է բարդության տեսակները և ներկայացնում կենսունակ ածանցները:

<sup>14</sup> Նույն տեղում, էջ 172:

Ուսումնասիրության մեջ ընդգրկված Հարուստ նյութի հմուտ վերլուծութիւնը, ընդհանուր տեսական բնույթն զանազան հարցերի ճիշտ մեկնարանութիւնը հեղինակին հնարավորութիւն են տվել ամբողջական կերպով ներկայացնել միջին հայերենի բառապաշարի նկարագիրը:

Այս բուրրով հանդերձ, միջին հայերենի բառապաշարի ուսումնասիրության համար կարևոր նշանակութիւն ունեն միջինհայերենյան բնիկ և փոխառյալ բառերի ստուգաբանութիւնները, որոնք անդ են գտել տարբեր բնույթի աշխատութիւններում<sup>15</sup>:

Հայ միջնադարյան մատենագրության մի քանի հուշարձաններին կից տրված բառացանկերում զգալի թվով բառերի ստուգաբանութիւններ է ներկայացրել Բ. Չուգասզյանը, հատկապես իբրև փոխառութիւններ արաբերեն, պարսկերեն և թուրքերեն լեզուներից:

Միջին հայերենի բառարանում տարբեր լեզուներից փոխառված և մի քանի տասնյակից անցնող բառերի ինքնուրույն ստուգաբանութիւնները պատկանում են տողերիս հեղինակին<sup>16</sup>:

**Р. С. КАЗАРЯН** — Из истории изучения лексики среднеармянского.— В статье посредством обзора истории исследования в области словарного состава среднеармянского языка дается оценка трудов наиболее выдающихся языковедов-арменистов, представляются их мнения относительно различных, связанных с этим литературным языком явлений.

<sup>15</sup> Տե՛ս Հ. Անադյան, Հայերեն արմատական բառարան, Բ. Ա.—Է, Երևան, 1926—35, Ստ. Մալխասյանց, Հայերեն բացատրական բառարան, Բ. 1—4, Երևան, 1944—45, Մ. Մորադյան, Բառագիտություն (տե՛ս «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», Բ. Ա, Երևան, 1972), Ս. Ավագյան, Վիճակահարմարությունների բառարանություն, Երևան, 1978, Գ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. Ասիագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, Միջին հայերենի բառարան, Բ. Ա—Բ, Երևան, 1987—92 և այլն:

<sup>16</sup> Ի դեպ, բառարանում ծագումով թուրքերեն կտրկէն բառը մեր կողմից սխալմամբ համարվել է կնկոս «եղևնի» բառից ստացած, մինչդեռ այն պարզապես ցնցոն «քոխի, քոխենի» բառն է: 17-րդ դարից վկայված փաթ-ը թյուրիմացաբար դիտվել է հայերեն բառ՝ իբրև փակ, այնինչ բառս պարսկական կամ թուրքական փոխառություն է և ուղակիորեն կապվում է բառ «մաքուր, սևադարձ» բառի հետ: Այդ բառերի սխալ բացատրությունների մասին խոսել է Ն. Մկրտչյանը «Միջին հայերենի բառարանին» նվիրված գրախոսականում (տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1993, № 1—2, էջ 195—98):